Նորայր Մանվելյան

Թթի փոխարեն՝ զեյթուն հատակին

Կարծես թե երեկ էր, երբ հայրս ջահել

Անունս լեզվին, «որդի» գոչելով,

Գոցում էր դուռը՝ իրեն վայել

Հայրական ծպտված խնամքով:

Երեկ էր այն օրը, երբ պապս ազնիվ

Մանկությանս ջրհոր կոպեկ էր նետում,

Զարդելով անիվը ճակատագրի՝

Երջանկության պատառ էինք պոկում:

Երեկ էր՝ եղբորս բանակ ճամփեցի՝

Արժեք գտնելու անգութ աշխարհում,

Նրա հետևից ջրի դույլ շփեցի,

Որ չփնտրի այն մահվան ճիրանում:

Երեկ էր, երբ սերս ջահել էր, անմիտ,

Սնվում էր միայն անցյալի ստվերներով,

Եվ կիրք էր շնչում ցնորամիտ,

Ներկայից տիեզերք ինձ շպրտելով:

Երեկ էր այն օրը, երբ ես ծնվեցի,

Եվ այո՛, այսօր պիտի մահանամ:

Մեկ օր էր, սակայն ողջ կյանք ապրեցի,

Որ վաղը կրկին վերադառնամ:

Կյանքերի հաշիվն էլ չեմ գրում պատին՝

Հիշողության մոմավառ սենյակում:

Այլ մարդ դարձած՝ անծանոթ իմ դեմքին,

Մեկ է, վաղվա ջրի համն եմ փնտրում:

Մարդկային սիրո օվկիանոսի,

Ես մի խարխուլ նավակն եմ լոկ,

Անտարբերության հորձանուտի

Փոթորիկ ցավից անողոք:

Լողում է նավակս, լողում անեզեր՝

Կյանքիս մերկ դրոշը ծածանելով,

Պարուրեց կոզիներ, անցավ խոր ջրեր՝

Հույսերի սին հա-մաճարակով:

Եվ մի օր, ահա, հանգիստս գտա,

Դրոշս խոհեմ հանեցի կայմից:

Քաղաքում, որտեղ Սիզիփը արքա

Հույսի իր ժայռն է գլորում սարից:

Օտարի դուռ թակելիս, թե տանս շեմին,

Ժպիտս ես Չ-դավաճանեցի,

Թթի փոխարեն՝ զեյթուն հատակին,

Մեկ օր էր, սակայն ողջ կյանք ապրեցի: